

Ամենամեծ ընդհանուր բաժանարար

Յուրաքանչյուր բնական թիվ, որի վրա բաժանվում է տվյալ բնական թիվը, կոչվում է վերջինիս բաժանարար:

Օրինակ`

12-ի բաժանարարներն այն թվերն են, որոնց վրա 12-ը բաժանվում է առանց մնացորդի:

12-ը առանց մնացորդի բաժանվում է 1, 2, 3, 4, 6, 12 թվերի վրա, ուրեմն 1, 2, 3, 4, 6, 12 թվերը 12-ի բաժանարարներն են:

Այժմ 1-ին տողում գրենք 12-ի բոլոր բաժանարարները, իսկ 2-րդ տողում գրենք 34-ի բոլոր բաժանարարները`

12-1,2,3,4,6,12

34-1,2,17,34

1-ը և 2-ը 12-ի և 34-ի ընդհանուր բաժանարարներն են, 2-ը այդ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարն է:

Այն բնական թիվը, որը տրված բնական թվերից յուրաքանչյուրի բաժանարար է, կոչվում է նրանց ընդհանուր բաժանարար:

Տրված բնական թվերի ընդհանուր բաժանարարներից ամենամեծը կոչվում է նրանց ամենամեծ ընդհանուր բաժանարար:

Երկու բնական թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը նշանակելու համար օգտագործում ենք փակագծեր` (\quad):

Գրում ենք այսպես` $(12,34)=2$

Առաջադրանքներ

- Գտեք տրված թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:
- 15 և 18 $(15,18)=3$
- 24 և 16 $(24,16)=4$
- 18 և 24 $(18,24)=6$
- 240 և 60 $(240,60)=60$
- 250 և 50 $(250,50)=50$

- 4 և 7 (4,7)=1
- 5 և 11 (5,11)=1
- 14 և 9 (14,9)=1
- 25 և 5 (25,5)=5
- 16 և 32 (16,32)=16
- 10 և 8 (10,8)=2
- 20 և 24 (20,24)=4
- 100 և 20 (100,20)=20
- 6 և 7 (6,7)=1
- 150 և 30 (150,30)=30
- 18 և 36 (18,36)=18
- 15 և 40 (15,40)=5
- 40 և 70 (40,70)=10
- 28 և 18 (28,18)=2

Ինդիք

Հեռուստամրցույթին մասնակցելու համար հավաքված մեծահասակներից և երեխաներից թիմեր պետք է կազմեն այնպես, որ բոլոր թիմերում լինեն հավասար քանակով մեծահասակներ և հավասար քանակով երեխաներ: Ամենաշատը քանի՞ այդպիսի թիմ կարելի է կազմել 45 մեծահասակներից և 54 երեխաներից:

Լուծում

$$(45,54)=9$$

Պատ.՝ 9 թիմ